*խում եւս, ուր համանուն գետի ակունքներն են, երկու հին, մէկը մեծ, մէկը փոքր, բազիլիկներ կան, թէեւ նման կոթողներ չեն գտնուած, բայց փոքր բազիլիկայի մի խոյակը կենդանական քանդակ ունէր, որ փոխադրել ենք Էջմիածնի Թանգարանը: Վերջապէս Բասախի ձախ ափին, Ծառայիչէն գիւղում փոքրիկ բազիլիկայի մօտ՝ գերեզմանոցում ունինք դարձեալ մի կոթող* (Պատկեր 19):



Պատկ · 34

*Արարատեան երկրից դուրս գալուց առաջ, յիշենք մի յուշարձան եւս, ուր փոքրիկ բազիլիկայի մօտ նոյն ոճի մի կոթող կայ, Կոտայքում Քանաքեռի մօտ, Աւանն է, նշանաւոր նաեւ Հռիփսիմէի տիպի իր տաճարով, բայց նորանից մի քան տարով մօտաւորապէս առաջ չինուած:*

*Այնուհետեւ Արարատեան երկրից դուրս դէպի հիւսիս, Լենինականից ոչ հեռու Դարբանդ գիւղում կան հին կոթողներ,*